ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Հայկական դիցաբանության մեջ պատերազմի և քաջության աստված Վահագնը ընկալվել է նաև որպես ամպրոպի (կայծակի ու որոտի) աստված: Վահագնը հրեղեն մազերով, արեգնափայլ աչքերով մի խարտյաշ պատանի է, որ ծնվում է եղեգան ծռախ ու բոց արձակող փողից այն ժամանակ, երբ երկինքն ու երկիրը բռնկված էին երկոնքի ցավերով: Հին հայկական հավատալիքների համաձայն՝ ամպրոպի ժամանակ երկրի մթին խորքերից երկինք են բարձրանում զարհուրելի վիշապներ, որոնք հասնելով Արեգակին, կուլ են տալիս նրան, խավարով պատում աշխարհը և փակում երկնային ջրերի՝ անձրևների ճանապարհը: Ահա այդ ժամանակ գործի է անցնում ամենազոր Վահագնը. նա հարձակվում է վիշապների վրա, ոչնչացնում նրանց և ազատում Արեգակն ու երկնային ջրերը գերությունից: Ահա թե ինչու Վահագնը բնորոշվել է «վիշապաքաղ» մակդիրով որը նշանակում է վիշապ քաղող՝ սպանող: Վահագնի ծննդյան ձոնը հնագույն ժամանակների հիմներգ է, որը գրառել ու մեզ է ավանդել Մովսես Խորենացին: